ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«11» հունվարի 2019 թվականի № 13-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(«ԱՅՐՆ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊ ընկերության նկատմամբ)

Հիմք ընդունելով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի կողմից քննված «ԱՅՐՆ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) նկատմամբ 2018 թվականի նոյեմբերի 21-ին թիվ 154-Ա հրամանով հարուցված վարչական վարույթի արդյունքները.

Պարզվեց, որ Ընկերությունը օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության ընդերքօգտագործման թիվ Պ-236 պայմանագրի 4.4.4 կետի դրույթից ելնելով՝ պարտավոր էր յուրաքանչյուր տարվա ավարտից հետո 60 օրվա ընթացքում լիազոր մարմին ներկայացնել միջանկյալ հաշվետվություն՝ կատարված երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների մասին:

Վերոնշյալի արդյունքում Ընկերության կողմից խախտվել են ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված դրույթները, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության ընդերքօգտագործման թիվ Պ-236 պայմանագրի 4.4.4 կետով նախատեսված պայմանները, որը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն հանդիսանում է ընդերքօգտագործման իրավունքի պայմանները ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ ընդերքօգտագործողին զգուշացում տալու հիմք: 2018 թվականի հունիսի 22-ի թիվ 01/29.4/3231-18 գրությամբ Ընկերությանը ՀՀ ԷԵԲՊՆ ընդերքի գործակալության կողմից տրվել է զգուշացում թույլ տրված խախտումները 90-օրյա ժամկետում վերացնելու վերաբերյալ: 2018թ. նոյեմբերի 21-ի թիվ 154-Ա հրամանով Ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը, քննարկելով Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթի արդյունքները գտավ, որ վարույթը ենթակա է կարճման, քանի որ համաձայն

ընդերքի գործակալության գրության՝ ընկերության կողմից վերացվել են գրավոր զգուշացման հիմքերը:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «ԱՅՐՆ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊ ընկերության նկատմամբ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2018 թվականի նոյեմբերի 21-ին թիվ 154-Ա հրամանով հարուցված վարչական վարույթը կարճել:

2. Ընդերքի գործակալության պետին՝ երկօրյա ժամկետում ծանուցել ընկերությանը վարչական վարույթի կարճման հրամանի վերաբերյալ:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն հասցեատիրոջն իրազեկելու պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից՝ երկու ամսվա ընթացքում:

1/11/2019

X

VERIFIED OCSP 1/11/2019 20:34:28 GMT+4

Signed by: VARDANYAN HAKOB 3914890533

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
/ ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ